

ՀԱՍՑԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

Ամբարշտութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւնք ետ չեն զրկուիր: Յօդուածներու պատշաճ դատուածները միայն կը հրատարակուին:

Բաժնեգէնի կամ ծանուցման փոխարէն ամէն երկրորդ նամակագրողներ (փուլ) կ'ընդունուին հարիւրին 20 պակաս հաշուելով: Մանուցումներ կ'ընդունուին զիրար մատչելի գիտնողով:

ΕΦΗΜΕΡΙΣ Η ΕΝΩΣΙΣ

ՄԻՈՒԹԻՒՆ

(ՕՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ)

ԲԱԺՆԵԳԻՆ

Տարեկան արծաթ ֆրանք 4
Վեցամսեան , , 2
Հայաշատ քաղաքներու մէջ ձեռքէ կը ծախուի հատը 10 սանթիմ:
Փոսթի ծախքը խմբագրութեան կը պատկանի:
Բաժնեգէնները կանխիկ վճարելի են: Թերթ ուղղներու բաժնեգէնը չը պարունակող նամակները նկատի չեն առնուիր:
«Միութիւն»-ը և ոչ մի տեղ ձրի չը զրկուիր:

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Կ Ի Ս Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Գ. ՏԱՐԻ

ԱԹԵՆՔ

15/27

ՄԱՅԻՍ

1899

ԹԻԻ 32

Հրագրոյս մէջ բոլոր հրատարակուածներու պատասխանատուութիւնը կը պատկանի իւրաքանչիւր յօդուածի հեղինակին:

ՆՈՐ

ՆԿԱՐԱԳԻՐ

Աշխարհի այն ամեն անկիւններէն, յորս արեւնաբամ վիճակի մէջ լքեալ և յուսահատ հայեր կ'սպրին, երբ մեծարարաւ կաղաղակուի գործիչներու Միութիւնը. սրուն արծազանք կուտան գրագէտներ աւակին հետ, թոյլեր զօրեղին հետ և մինչև իսկ անտարբերներ շեղմ յեղափոխականին հետ. և ահա մի ուրիշ անկիւնէ մը կը լսուի մի նոր նկարագրի, գաղափարի արտայայտումն «Ման Դաւանան» անուն մի նոր գործիչներ կամ ընկերութեան, հետեւաբար մի նոր կուսակցութեան յաւերժմար:

Ազգային գործիչ ոյժերն կուսակցական բաժանմամբ չէզոքացնելու սկզբան ճշմարտութիւնն շատ ակներև է, որ ճարակ կը գտնէ մեր մէջ և բաղձացեալ նպատակի հակառակ արդիւնքը կուտայ. քանիչ, աւերիչ և անդարմանելի, ու մենք դեռ կը շարունակենք: Բայց կուսակցական գաղափարի մասին խօսելը զանց առնելով մեր ուշադրութիւնը դարձնենք սոյն նոր նկարագրի «Ման Դաւանան» անուն ընկերութեան գոյութեան իրաւունքին վրայ. թէ՛ արդեօք իրաւի պէտք ունի՞նք այսպիսի մի սարսափելի գործադիր մարմնոյ. եթէ ունինք, քնականաբար կը հետեւի թէ մեր ազգային կարևոր մի մասն, բազմաթիւ երիտասարդ գործիչներ, ազգասէրներ շրջապատուած են լըրտեսներու լէզէոններէ, մատնիչներէ, քսուներէ ևն ևն. և այս ամենն անշուշտ ի նկատի առնուած, քննուած ու հաստատուած պէտք է լինին յիշեալ ընկերութեան կազմակերպիչներէն. ուրիշն անհրաժեշտ մի հարկ կայ յապագայ վերածնութեան մի կանոնաւոր յեղափոխական մարմնոյ կամ ի չափ ազգին՝ ստեղծել Անկերելոյթ ձեռք մը, որ շանթահարէ սուրբ գործին թշնամիները. բայց ինչպէս որոշել այդ թշնամիները. դաւանանները. և ինչ իմաստալ ոգաւաճան» ըսելով: Արդեօք նոր գաղափարի մը քննադատներ դաւանան պիտի ճանչցունին. նորա չի համակերպողներ, հակառակողներ և անտարբերներ ինչպէս երբեմն եղաւ հասաէր գործիչների տկար նկարագրի և թոյլ բարոյականի սահմանափակ դատո-

ղութեամբ. որով նորա փոխանակ իրենց կոչման ծառայելու՝ ներքին և անվերջ բանակաւորներով կեանք, դըրամ, ժամանակ և նպատակ կորսնցնելով դիւրութիւն տուին թշնամեաց ընել ինչ որ ցանկացան: Թէ՛ իսկապէս դաւանան պիտի հաշակուին նորա որք մի օր անկեղծ յեղափոխականները «ազգին ճակատագրի հետ խաղացող սրիկաներ» կը կոչեն և երկու օր յետոյ «Կոմիտէի անդամ» լինելու մարման ղէն բռնուած ինքզինքնին շեղմ ազգասէր հուշակելով գործիչներ խմբին մէջ կը սողոսկին և անզգաբար կը թունաւորեն անկեղծ երիտասարդները և այդ կերպով դարձեալ կ'սկսին իրենց թագուին նպատակն իրագործել ի վնաս ազգին:

Դաւանան պիտի ճանչցունին նորա, որք միմիայն չափ և հանգիստ որոնելով ամեն ազգաչէն առաջարկի ու գործի ուղղակի կամ մանուածապատ կերպով խոչնդոտ պիտի լինին վերջապէս՝ նորա որք շահու և կուսակցական նեղ հայեցակէտով տոգորեալ անհատական կամ հաւաքական ոյժերն չէզոքացնելու պիտի միտին, ու եթէ այս ամենուն հետ հաշուի առնենք նաև ուղղակի մատնիչներ և լրտեսներ, պարզ է թէ ինչ մեծ դիմագրաւելու լէզէոն մը պիտի գտնեն մեր ահաբեկիչ նոր կազմակերպութեան անդամները իրենց դէմ: Արդ խնդիր է փախալ թէ նկատառեալ գումարտակներուն դէմ գուպարելու նիւթակն և բարոյական լրջմտութիւնն ու զօրութիւնն ունենալ կը յուսան կամ արդէն ունին՝ դաւանանաց մահափախութեամբ. եթէ այո՛, այսինքն եթէ նորա ունին 1. Բարոյական լրջութիւնն միջոցներու ընտրութեան և գործերը ուղիղ դատելու մէջ. հեռի ամեն անձնական և փառասէր ձգտումներէ. 2. Գործելու բարոյական և նիւթական կարողութիւն լիովին նպատակին նուիրուած. և 3. Եթէ նորա ոչ թէ հրապարակի մէջ ի հանդէս գալու սնափառութեամբ. այլ ուղղակի այդպիսի մի կազմակերպութեան պէտքն անկեղծօրէն ըմբռնած ու հետեւանքներուն օգտակարութեան համոզուելով գուրա կուգան գործելու, ևս քաջ համոզուած եւ որ նորա ինձ պէս շատերէ մեծ ընդունելութիւն, քաջալերութիւն գտնելով ազգին ալ մեծ ծառայութիւն պիտի մատուցանեն. ըստ այն վճարի թէ «որ ոչ լուիցէ ունկամը, լուիցէ թիկամը»: Իսկ ընդհակառակը, եթէ կուսակցական մի նոր կառուածողի սերմը պիտի լինին, լաւ է որ մի քիչ ալ սպասեն գործելու...:

Շահէն

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՄԱՂՈՂ ՈՒ ՀԱՅՆՈՐԱՆԵՐՈՒՆ

Ա. ԴԱՍ

Հասարակութեանց, ժողովուրդներու և վերջապէս հանուր մարդկութեան, ազատութեան, լուսաւորութեան և յառաջդիմութեան, ամենաէական միջոցը, յեղափոխութիւնը, յեղաշրջումն է եղեր միշտ և կը լինի յաւիտեան, միակ նուիրական ու սրբագործուած միջոցն է եղեր յեղափոխութիւնը, որ պատմական դարերէ ի վեր առաջնորդեր է մշտքով կոյրերուն գէպի լուսաւորութիւն, թշուառ ստրուկներու գէպի ազատութիւն, նա եղեր է ինքնաճանաչ դժբաղդ արտասուողներու արին արցունքը դադրեցնողը, նա է եղեր քաղաքակիրթ աշխարհի մտաւորական հորիզոնի վրայ կուսակուած խաւարաղմուղը վանող շնչոտակի փայլակը և վերջապէս նա է եղեր այն ուժին ազգակը, որու շուրջը դարձեր է ու կը դառնայ աշխարհն ու մարդկութիւնը, ժամանակն ու քաղաքակրթութիւնը:

Մարդկութեան, ազգերու յեղափոխութեանը յեղաշրջմանը համար Աստուած մը նոյն իսկ իշաւ երկրներէն, Աստուած մը իր բարձրութենէն, Աստուած մը իր ամենաահեղ զօրութեամբ իշաւ, և իբրեւ սովորական մարդ խաչուեցաւ, նահատակուեցաւ և իր նահատակութեամբ կենդանի օրինակ եղաւ մոլոր մարդկութեան կուրիլ խաւարի դէմ, կըռուիլ բռնութեան դէմ, կ'սկսէ ու կ'սկսէ սորվեցուց այն ամեն անիրաւութեանց դէմ, որք կը ճգնին քաղաքիկ արդարութիւնն ու ճշմարտութիւնը: Եւ ահա այդ միեւնոյն նահատակութիւնը, միեւնոյն տեսակի յեղափոխութիւնը, որը սկսեց հայը, այսօր այդ Ս. Գործը ծաղրի ու հայհոյութեան առարկայ է եղեր արտասահմանեան ազատ միջնորդութիւնը, գտնուող հայութեան որոշ դասակարգի մը համար:

Այդ դասակարգի մէջ կը գրտնուին առ հասարակ պորտաբոյծաղաներ, բուրժուա-էֆէնտներ, գըրպաններ ու քթիւրներ ուսած-վաճառականներ, դասալիք եղած, կուրի, գործունէութեան ասպարեզէն փախչող նախկին իրենք իրենց յեղափոխական համարող վատշուէր սուտ գործիչներ, վարժապետ-տիրացուներ, փտտած կղերներ և այլն, և այլն...:

Արդեօք յեղափոխութեան և մաքուր հասարակութեան անպատուաբեր այդ տգէտ դասակարգը ինչո՞ւ կը ծաղրէ, կը հեգնէ, ինչո՞ւ կը հայ-

հոյէ յեղափոխութեան և բոլոր յեղափոխականներուն վատն ու լաւը, թացն ու չորը միասին խառնելով: Եւ արդեօք կարելի՞ է լսել ու լուիլ, հաւատալ այս տեսակ եպերելի ոճրագործ-դաւաճանութեանց:

Ինքնին խնդիր մը կը ծագի այստեղ, թէ ինչո՞ւ կը հայհոյեն այդ թշուառականները, այսպէս Ս. Գործի մը մեղաւորը ո՞վ է:

Մենք այս հարցին այսպէս կը պատասխանենք. Յեղափոխութիւնը ինքնին մեղաւոր չէ երբէք, և չէ ալ կարող լինել, այլ մեղաւոր են այն մասնաւոր խաբեայ գործիչները, որոնք յեղափոխականի դիմակի տակը ծածկուած, այդ սրբանուէր Գործի անունով հայ հասարակութեան մէջը մտան, և այդ միեւնոյն Ս. անունը իրենց զրուելի անձնական քահանայներուն ծառայեցուցին, իրենց եսականութեան, իրենց փառքին ու շահին ծառայեցուցին:

Ասոնք մասնաւորապէս յեղափոխութիւնը շահագործող անազնիւ և խաչագող կեղծ յեղափոխան գործիչներն եղան:

Սակայն միթէ՞ մեր ամբողջ հայ յեղափոխականները անազնիւներ և խաչագողներ են, երբէք և երբէք. սրբապղծութիւն է այդպէս մտածելն անգամ:

Ինչպէս որ ամեն մի տարրը, ամեն մի բաղադրութիւնը, գտիչ բողքն անցնելէն առաջ կուենայ իւր անպէտք և աւերիչ մասը, նոյնպէս ամեն մի հասարակութիւն, ամեն մի շրջան, ամեն մի կազմակերպութիւն կուենայ իւր մէջ սպրդած, խաչագողներ, անազնիւներ, վատեր, գուցէ և դաւաճաններ... Բայց և այնպէս ժամանակի ընթացքին մէջ տարր մը կամ ո՛ր է բաղադրութիւն մը վարպետ-արհեստաւորի գտիչ բողքն անցնելով կը մաքրուի, կը սրբուի և ամենէն գունագեղ դարձեր, բազմաշան կարևոր պէտքերը կը կը մատակարարէ մարդկութեան:

Նոյնպէս է նաև հասարակութիւն մը, շրջան մը կամ կազմակերպութիւն մը, կամաց կամաց անցնելով հասարակական գործունէութեան ասպարէզէն, իրենց մէջը գտնուած թոյլերը, վատերը, դասալիքները և վերջապէս խաբեայները իրենք իրենց կը մաղուին, կը թափուին գետինը, կէս ճանապարհին կը մնան, կը չորանան, կը թուովն ու կ'անհետանան: Իսկ մնացեալ մաքուր մասը կը շարունակէ անյողդող իր ընտրած ուղին:

Ուրեմն լսեցէ՛ք դո՛ւք յեղափոխութեան և ամբողջ յեղափոխականներու հեգնողներ, կամ որ նոյն է հայհոյողներ լսեցէ՛ք: Կարելի՞ և մի-

աժամանակ ներկայի է որ ամբողջ Ս. Գործ մը, ամբողջ կազմակերպութիւն մը կամ ամբողջ հասարակութիւն մը, հայհոյութիւն, ծաղրի ու ծանակի առարկայ դառնայ, անուանարկութիւն քանի մը խաբեմաններու պատճառաւ, ներքին է ձեռք կը հարցնեմ. մի՞ պատահականօրէն, պատահական տուէք խղճի մտքը (եթէ խղճ ունիք) թէ ի հարկէ ներքին չէ. Ետտ լաւ: Ամեն տրամաբանօրէն հաշիւը, տեսութիւնը այդ կը սորվեցնէ մեզ՝ ուրիշն որքան խիստ պէտք է լինի ձեր պատիժը, երբ դուք արտասահմանի ազատ երկնի տակ, ք ա ֆ է - չ ա ն թ ա ն ներու ե սրճարաններու մէջը մեղկօրէն ընկողմանած յեղափոխութիւնը կը հեզնէ՛ք ու կը հայհոյէ՛ք:

Որքան խիստ պիտի լինի ձեր պատիժը, ու որքան թանգ պիտի նստի ձեզ այդ հեզնութիւնները, ի հարկէ անկասկած ժամանակն ու ապագան պիտի վճռէ այդ... Հայ անձնագործ յեղափոխականը պիտի որոշէ ու ցոյց տայ ձեզ այդ...:

Դո՛ւք, յեղափոխութիւնը հայհոյող ու հեզնողներ. դո՛ւք լսեցէ՛ք, չէ՞ որ այն կլորիկ ոսկիները, այն հնչուն արծաթները ու այն փայլուն մարգարիտները, որոնց ունենալու ե ձեռք բերելու համար հոգիներդ, պատիւներդ, խիղճներդ ե վերջապէս ամբողջ էութիւններդ կը զոհէք, դո՛ւք գարշելի արարածներ, չէ՞ որ ձեր այն պայտած, խնկարկած նիւթերը, դեռ չ'զտուած, չ'մաքրուած, չ'յրդկուած հագար ե մի աղտեղութեամբ խառն է եղել:

Դո՛ւք, յեղափոխութիւնը հայհոյողներ, լսեցէ՛ք, եթէ պատահամբ, սեղ մը անգին աղամանդի կտոր մը

գտնէք, բայց քիչ մը կեղտերով ծեփուած լինի, ի՞նչ կընէք այդ աղնիւքարը. կը ձգէք գո՛ւրսը, կը կոխտէ՛ք ոտքերնուդ տակը, ի հարկէ ո՛չ, հապա՛, ես վստահ եմ որ այն ժամանակ որչափ ալ քարը ու զգուելի կեղտ լինի վրան թերեւ անհամբերութեամբ լզելով աշխատիք մաքրել, որպէս զի շուտով գրպաննի՛դ դնէք:

Դո՛ւք, յեղափոխութիւնը հայհոյող ու հեզնողներ, երբոր նոյնպէս աղամանդ մը ունենաք ե աղամանդագործին տանիք զայն յղկելու, կոկեղու, ձեր ուզած ձեր տալու համար, ու երբ աղամանդագործը լաւ վարպետ եղած չ'լինի, ե փոխանակ յինելու ձեր աղամանդը, զայն աւրէ ու փչէ, ո՞վ կը լինի մեղաւորը այն ժամանակ. աղամանդը, ի հարկէ ո՛չ, ամբողջ աղամանդագործ արհեստաւոր վարպետները, ի հարկէ նոյնպէս ո՛չ. հապա ո՞վ կը լինի մեղաւորը, անտարակոյս միայն այն վարպետը աղամանդագործներէն՝ որին դուք յինել տուած էիք ձեր աղամանդը, վարպետ կարծելով զայն:

Այս ալ շատ լաւ: Ուրիշն դո՛ւք թշուառականներ, այն ժամանակ ձեզ իրաւունք կը տաք ամբողջ աղամանդներուն ե ամբողջ աղամանդագործներուն հայհոյելու, ծաղրելու ե ոտքի տակ տալու: Կը հասկնա՞ք մեր ըսածները, տրամաբանական կը դրանէ՞ք մեր տեսութիւնները:

Այժմ, ի՞նչ անուն տանք ձեզ, յեղափոխութիւն հեզնողներ, երբ ամենասուրբ գործը յեղափոխութիւնը մասնաւոր խաբեմաններ չահագործելն ե կը շահագործեն, ինչո՞ւ դուք փոխանակ աշխատելու Ս. Գործը չահագործողներուն ոտքի տակ առնէք:

Լու, կտոր կտոր ընելու, ընդհակառակը, կը հայհոյէք թէ՛ յեղափոխութեան ե թէ՛ անոր նուիրուած ամենազնիւ ե ճշմարիտ անձնութիւններուն:

Ի՞նչպէս վարուինք ձեզ հետ այդ վարմունքի համար, եթէ ոչ դաւաճանութեան սե գործը գործով ձեր սեփ-սե ճակատներու վրայ: Դաւաճանութիւնն ալ իր գանազան ճիւղերը ունի, որոնց մէկ ճիւղը ձեր այդ ընթացքն է, յեղափոխութիւնը հեզնողները:

Միակ միջոցն է այդ, բացի դաւաճանութեան սե դատախիշից, յաւիտենական անիծից ու նախատանաջ դրոշմը դրոշմելուց, Ս. Գործը ե անոր ամբողջ անձնուէր մշակներին՝ հեզնողներուն ու հայհոյողներուն մահահանգոյն ճակատներուն վրայ, բացի այդպէս վարուելէ ուրիշ յարմարագոյն միջոց մը չունինք գործադրելու անոնց համար որոնք պիտակից կերպով կը հեզնեն Ս. Գործը:

Եւ այդ քարէլիները կը հայհոյեն այն ժամանակ, երբ Մայր-Հայրենիքի մէջ թշնամու անխնայ սրէն հնձուած հարիւր հազարաւոր հայ եղբայրներն, քոյրերն, մայրերն ձեր ու երիտասարդներու արեւնաթաթաւ, անթաղ դիակնց դէպաղէզ կոյտերը, վայրի դաշտաններն ե լէշակեր թռչնոց կերակուր դառնալով, լուի բողբոջ կը կարգան առ երկինքն ու երկինք, առ Աստուածն ու մարդկութիւնը:

Կը հայհոյեն այն ժամանակ, երբ Մայր-Հայրենիքի մէջ կռուի դաշտին վրայ սուրն ի ձեռին հերոսաբար յեղափոխութեանը ողջակէզ եղած, հա-

զարաւոր հայ առիւծաւորտ անձնագործ կտրիճներ իրենց գերիգմաններէն ահեղամուսնչ «վրէժ», «վրէժ» կը գոռան:

Կը հայհոյեն այն ժամանակ, երբ միլիոնաւոր հայ-արեւակից որր ու այրիներ, Մայր-Հայրենիքի մէջ այսօր սովալլուկ «փշուր մը հաց, պատառ մը կերակուր» պտալով ե երկրէն իրենց յոյսը կտրած, արտասահմանի հայութեանը կը յառին իրենց արեւնաթաթաւ արտաստեղծաւոր աշուղները «փրկութիւն», ազատութիւն, թիւրքի լծէն» մրմնջելով:

Իսկ արտասահմանի այդ փոտած դասակարգի հայն ի՞նչ կընէ. (ե որը յանձնու ցաւալի է, գրեթէ մեծամասնութիւնը կը կազմէ) ի՞նչ պիտի ընէ, թէ՛ յեղափոխութիւնը ե թէ՛ ամբողջ կռուի դաշտին վրայ, հայրենիքի դեռ ծիացող տանց փրատակներուն երբեք զոհողներուն ե կենդանի նահատակներուն կը հայհոյէ, ահա՛, սոսկալի աւելի քան բստմիւսի դաւաճանութիւն է այս:

— Ինչո՞ւ ըրէք որ կոտորուէին այդչափ հայերը, թուրք լուծը շատ լաւ էր մեզ համար — կը պատասխանեն երբոր այդ թշուառականներուն պաշտօններն որ չ'որբապղծեն Ս. Գործին ե իւր ճշմարիտ հետեւողներուն իրենց պիղծ լեզուներովը:

Մենք վերջնականապէս այս կըսենք ատոնց:

Բնութիւնը, կեանքը ինքն է սահմաններ, ինքն է ստեղծեր յեղափոխութիւնը, առանց ատոր ապրել կը նշանակէ դիակ լինել. անբան առնաւորն նոյն իսկ ինթակայ է յեղաշրջուելու, առանց իր պիտութեան:

ԼՐՏԵՍ — ՅԵՂԱՓՈՒՄԱԿԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԻՆԸ ՏԵՍԱՐԱՆՈՎ

Դիտեց ե Դրեց

ՃՇՄԱՐՏԱՆՈՍԵԱՆ

(Շար. ՅԱՐԳ ԹՈՒՆՆ)

Սպան — Պէտք է համոզենք: (Հայերուն դառնալով) պէտք է հնազանդիք տէրութեան օրէնքներուն, ձեր այս արարքը օրինաց հակառակ է:

Ձայն մը — Մենք օրէնքի հակառակ բան մը ըրած չունինք, մենք եկած ենք մեր ցաւերը յայտնելու Ստորագրամին, որպէս զի մեր աղերսազները Սուրբանին ներկայացնէ ե խօսք տայ մեր պահանջները գոհացնելու:

Սպան — Բայց ի՞նչ կը նշանակէ այսպէս բազմութեամբ աղերսադիր մատուցանել:

Ձայն մը — Ժողովուրդն է որ իր ցաւերը կը յայտնէ:

Սպան — Սրբկայ՝ ձայնդ կտրէ՛, դեռ պիտի եղն քուսեր ժողովուրդի կողմէ կը խօսիս:

Ձայնը — Ես սրիկայ չեմ, լեզուդ բեզ քաշէ՛:

Սպան — Սա սրիկան նայէ՛, դեռ կը համարձակի դէմս խօսելու: (Քոփի ղինուորականին դառնալով) չուտ ձերբակալէ՛ սա շունը:

(Ձինուորականը ձայնին կը մօտենայ, կողքէ ձերբակալել, խօսող երիտասարդը բէջովէրը քաշելով կըստառայ գինուորականին: Սուրբին մէջ իրար անցում մը կը տրի, զանազան ձայներ կը բարձրանան: Խըմբէն մէկը երիտասարդին մօտենալով:)

Մէկը — Ձէնքդ պահէ՛, պատուէրը չե՛ս յիշեր կոր, գէնք չի պիտի պարպուի, արիւնայեղութեան պատճառ պիտի ըլլաս:

Ձայնը — Հապա՛, թող տամ որ զիս սպաննեն:

Մէկը — Հեռացի՛ր, ետեի կողմը անցի՛ր:

(Այս միջոցին գինուորականը երիտասարդին սպառնալիքին կարեւորութիւն չի տալով կողքէ զայն ձերբակալել: Երիտասարդը իսկոյն բէջովէրը անոր վրայ կը պարպէ. Ձինուորականը կը գլորի: Երիտասարդը գէնքը կողքէ Սպային վրայ, Սպան ես կը գլորի: Ձինուորներ, ոստիկաններ, փօլիսներ, թուրք խուժանը վրայ կը հասնին: Հայերու կողմէ մէկ երկու զէնք ես կը պարպուի, իսկ թուրքերը սփռանալով խուժանի վրայ կը յարձակին: Հայրէ՛ն որը կը փախչի ձեռքի բէջովէրը առանց պարպելու, որը լեցուն բէջովէրը նիտելով կը հեռանայ, որը կռուի կը բռնուի, շատեր արիւնաթաթաթա դետին կը փռուին սփռանալով հարուածին տակ: Կէս ժամուան մէջ հայերէն շատերը կը փախչին, ոմանք փոլիսներու կողմէ կը ձերբակալուին, ե ոմանք ալ կիսամեռ կամ մեռած փողոցին մէջ կը մնան: Փողոցը կամայանայ, մի բանի փօլիսներ միայն կը մնան կռույն վայրը, իսկ թուրք խուժանը փախող հայերը կը հալածէ: Թուրք խուժանը դէմը պատահած հայը կ'սպաննէ, խուժանը երթալով կ'ստուարանայ ե զանազան ճիւղերու կը բաժնուի, խանութներ կը կողպատուին տուներ կը կոխուին ե ողջ մնացողները տեղնուտեղը կըսպաննուին: Այս կոտորածի, ջարդի ե կողպատուի ահաւել տեսարանը

Պօլոյ գրեթէ բոլոր թաղերու մէջ կը կրկնուին: Խաներու ե մարսերու մէջ հայաստանցի բռնակալներ ե զարիւզներ ոչխարի նման կ'սպաննուին: Հայերու կողմէ մի քանի տեղեր միայն թեթեւ գրիմադրութիւններ կը տեսնուին: Ոստիկանները ու փօլիսները փողոցը պատահած միամիտ հայերը կը ձերբակալեն ե բանտեր ու խարաղօխանէներ կառաջնորդեն, ձերբակալուած հայերէ ոմանք թուրք խուժանէն կ'սպաննուին փօլիսին աչքին առջեւ, որ բնաւ չ'բարկուի, իսկ անոնք որ ողջ բանտ կը մտնեն, տեղնուտեղը կ'սպաննուին ե դիակները իրարու վրայ կը դիզուին: Քիչ յետոյ, դիակներ կաթեր դիակները կը հաւաքեն, այս կաթերու մէկ մասը դէպի Բերայի գերեզմանատունը կուղղուին, մէկ մասը Ազգային հիւանդանոցի կողմը, իսկ մեծ մասը Պապը Զապիթէն, ուրտեղէն այստեղ հաւաքուած դիակները նոյն գիւղերը գաղտնաբար ծովը կը նետեն: Այս միեւնոյն տեսարանը երկու օր կը շարունակուի: Ողջ մնացած միամիտ հայերը տուն տեղ ու խանութ ձգած եկեղեցիներու մէջ կ'սպաստանին, նոյնպէս ցոյցին մասնակցողները: Տեսարանը կը փոխուի վարագոյրը իջնելով: Երբ վարագոյրը կը բացուի Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցին սուրինաւոր գինուորներով շրջապատուած է, խուժան արցիլուած է ներս մտնել: Թաղական խորհուրդի անդամներէն Գ. Զ. պահակ գինուորին:)

Գ. Զ. — Ես այս եկեղեցին պաշտօն ունիմ, պէտք է ներս մտնեն:

Ձինուորը — Անկարելի է, հրա-

ման չունիմ ներս մտնելու:

Գ. Զ. — Մեծդ ուրտեղ է:

Ձինուորը — Ներսն է, եկեղեցիին բակը:

Գ. Զ. — Լա՛ւ, իմաց տուր անոր, ես անոր կը հասկցնեմ իմ ո՞վ ըլլալու:

Ձինուորը — (ուրիշ գինուորի մը) Գնա՛, պին պաշին իմաց տուր:

(Ձինուորը կը մեկնի ե պին պատշին հետ կը վերադառնայ:)

Պին պաշին — Ի՞նչ կայ:

Ձինուորը — Այս մարդը կուզէ ներս մտնել:

Պին պաշին — Դուք ո՞վ էք:

Գ. Զ. — Ես թաղական խորհուրդի անդամ եմ, թերեւ ինձի պէտք կ'ունենաք, ե թէ պէտք է եկեղեցիին վրայ հակմ:

Պին պաշին — Լա՛ւ, Մեկքեան էֆէնտին ձեզ կը ճանչնա՞յ:

Գ. Զ. — Այո՛, գիտէ իմ պաշտօնս:

Պին պաշին — Ներս մտէ՛ք: (Պաշակին ուղղելով) առանց հրամանիս չըլլայ որ ներս մտնէ թողուք հա՛...:

Պին պաշին (Մեկքեանին ուղղելով) Այս էֆէնտին կը ճանչնա՞ք, այստեղ պաշտօն ունի՞:

Ս. Մեկքեան — Այո՛, թաղական է:

(Գ. Զ. ուրիշ թաղականի մը մօտենալով:)

Գ. Զ. — Խնդիրք ի՞նչ կերպարանք առաւ:

Թաղ. — Տէրութեանց թարգմանները պիտի դան ե յողովուրդին ապահովութիւն ցոյց տալով պիտի ցրուեն:

Գ. Զ. — Ի՞նչ տեսակ ապահովութիւն:

Թաղ. — Ամեն մէկին մէյմէկ տոմսակ պիտի տան, որ ցոյց տուողը չի ձերբակալեն:

Գ. Զ. — Ուրեմն, կառավարու-

Իսկ հայր 500 երկար ու ձիւ
տարիներ անանային, ստրկային դը-
րութեան մէջ մնալուց յետոյ չէ՛,
այլ ևս չի կարող տանել այդ ստրկի
կեանքը, նա իբրեւ մարդ կուզէ ապ-
րիւ, այլ ևս իբրեւ տէր իւր արդար
իրաւունքներուն. այդպէս Շվէյցար-
իան իր Գաղափարական Հերոսներովը,
Հէյնցէք-Պոսնիան իր Ժորժ-Ուսկոկ-
ներովը, Յունաստանը իր Բոցարի-
ներովը, Իտալիան իր Գաբրիէլի-
ներովը, երէկուայ Քուպան իր Մար-
տիրներովը և վերջապէս այդպէս ը-
րաւ երէկուան փոքրիկ Կրետէն իր
Քաջասիրտ Հելլենոքրիներովը: Այդ-
պէս ըրաւ և պիտի ընէ նաև հայր իր
անձնազոհ և դիւցազնոգի կտրիճ-
ներովը:

Կարգացէ՛ք ամեն ազգաց յեղա-
շրջմանց պատմութիւնը և պիտի հաս-
կընաք որ առանց վնասներու, ա-
ռանց զոհերու, առանց արիւնայեղ
կոտորածներու, ազատութիւն չի կա-
րելի ձեռք բերել:

Յեղափոխութիւնը մեծ գործ է
և մեծամեծ զոհեր կը պահանջէ:

Գործը սկսուած է և պէտք է
անընդհատ շարունակել մինչև վերջը
պէտք եղած խելացի միջոցներովը:

Երանի՛, հազար երանի՛ այն ազ-
գին, այն ճշմարիտ յեղափոխականին
որ կը տոկայ, կը մարառի ու կը դի-
մանայ մինչև վերջը, պողպատեայ
կամքով ու անվախ սրտով կուրծք տա-
լով իր դէմ ելած ամեն մի հալա-
ծանքներուն, ամեն մի վտանգնե-
րուն. այն յեղափոխականն է, այն
ազգն է որ կը հասնի իր ցանկալի
նպատակին: Այն յեղափոխականն է,
այն ազգն է որ պիտի վայելէ բարո-

յական պատկի անթարչամ փառաց
շուշանն ու դափնիները:

Ուրեմն — մահ դաւաճանաց, մահ
Ս. Գործին և անոր ազնիւ աշխատա-
ւորներուն հեգնող ու հայհոյող ա-
նարգ վատերուն. հայ ճշմարիտ յեղա-
փոխական: մահաբեր սրին են միայն
նոքա արժանի:

Յաւիտեական անէ՛ծք ու նա-
խատինք, մտքեր պղտորող, կենդանի
դիակ յուսահատողներուն: (1)

Կամք, Զանք և Փառք հայ յե-
ղափոխութեան արի և անձնազոհ
մշակներուն:

1899 Ապրիլ 9/21 Ազրայիլ
Գահրէ

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԸ

— Ուրախութեամբ կարգացինք
պատ. ԱՄԻՆՈՒԹԻՆԻ մէջ հանգու-
ցեալ մեծանուն Նուպար փաշայի
որդի վաւ. Պօղոս փաշայի ձեռք
արտասահմանի մէջ մի որբանոցի
բացման խնդիրն, որն որ միակ օգ-
տակար և զուտ ազգային կը լինի
ազատ երկրի մէջ, ազատ այլադուռան
մարդորսներու ձուլումներէն, ազատ
թրքական բռնակալ ԱՄԵՐԻՔԱՆՆԵՐ
որով ո՛չ միայն կ'անմահանայ Նուպար

(1) Մեր հակայեղափոխականներուն
տալիք երկրորդ դասին մէջ յականէ
յանուանէ պիտի հրապարակենք քա-
նի մը հակայեղափոխականներու ա-
նունները ի խրատ շատերուն:

Մ. Յ.

փաշայի և զերդաստանին անունը,
այլ և ապագայ լուրջ հայ երիտա-
սարդութեան ոտից անսայթաք մի
ուղի կը պատրաստուի: Չենք հաւա-
տար թէ վաւ. Պօղոս փաշայի ծանօթ
ազգասիրութիւնը կամ անձնապէս և
կամ օժանդակ ձեռներէցութեամբ մի
այսպիսի մեծ գործի համար սատար
լինելու բարեմտութիւնն ետ կենայ:

Հայ ազգը իւր պանծալի մեծ
մարդէն սրտագին կը սիրէ յուսալ
սոյն խնդրոյ իրականացումն յօրինակ
ուրիշ կարող հայերու:

Դէտ

ԱՆԿՂՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱ-
ՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Ձինաստանի շոգեկառքներուն հա-
մար եղած համաձայնութեան վրայ
անգլիական մամուլին ցուցուցած ո-
գեւորութիւնը կամաց կամաց կ'սկսի
պակսիլ, վասնզի այդ համաձայնու-
թիւնը այնչափ կարեւորութիւն չունի
որչափ կը կարծուէր: Ռուս կառա-
վարութիւնը գրեթէ պաշտօնապէս
հրատարակել տուաւ այդ բանը և
Հորտ Սալգարի նոյնը կրկնեց Լոր-
տերու սենեկին մէջ. — Յիրաւի այդ
համաձայնութեան հատուածներէն
կերեայ որ Անգլիոյ տրուած առաւե-
լութիւնները չնչին են: Անգլիացիք
ուսեցիկ քաղաքականութեամբ յայ-
տարարեցին թէ իրենք դարձեալ Ձի-
նաստանի մէջ ձեռք բերին «ամեն-
ազգեցիկ» քաղաքականութիւնը և թէ
ամեն դուռ իրենց առջև բաց է: Ա-
պագան իրենց վերապահելով հան-
դերձ, այս համաձայնութիւնը իրենց
թոյլ կուտար ծովային վաճառակա-

նութեան մեծ մղում մը տալու: Սա-
կայն այդ չի յաջողելով ուղեցին ի-
րենց վերապահել Ձինաստանի ամե-
նակարեւոր մասն, այսինքն Եան-Թա-
ֆիանկի Հովիտներն: Բայց մինչև
այսօր դեռ ոչ ոք այդ մասին որոշ
խոստում մը ըրած է իրենց, ընդհակա-
ռակն Ս. Բեդրպուրկէն եկած հեռա-
գիր մը կը յայտնէ թէ երկու սիւնա-
կով ն օ թ ի ն մէջ — այս համաս-
ձեւին տակ եղած է համաձայնու-
թիւնը — բնաւ խօսք չկայ ամեն-
ազգու քաղաքականութեան վրայ:
Խնդիրն ամենազոռ քաղաքականու-
թեան վրայ լինի թէ՛ ոչ, բնաւ կա-
րեւորութիւն չունի Ռուսաստանի
համար: Թրանսիպերական շոգեկառ-
քով Ռուսերը իրենց ձեռքին տակ պի-
տի ունենան Մանչուրի, իսկ նոր
համաձայնութիւնը իրենց թոյլ կու-
տայ ուղածուն պէս, շոքեկապէս գի-
ծերն մինչև Մանչուրի և նոյն իսկ
Փէքին քաղաքը Անգլիոյ հետ գործ
ունենալու:

Ուրեմն առաջին նայուածքով կե-
րեայ թէ Ռուսիոյ և Անգլիոյ միեւնոյն
առաւելութիւնքն առած են, բնեւեղով
կը տեսնուի որ Ռուսները շատ բան
ստացած են իսկ Անգլիացիք ոչինչ:

Անգլիացիք որ ընդհանրապէս
կուզին ուրիշներուն խաղ խաղալ, այս
անգամ աւելի խորամանկին հանդի-
պեցան և խաղն իրենց խաղցուեցաւ:
Այս անյաջողութեան առջև լաւ բնա-
ւորութիւն ցոյց տալ փորձելէ յետոյ,
կը տեսնեն որ այդ հապառ կլլելն
դժուար է և կ'սկսին դէմքերին ծռ-
մըռել:

A. Saissy և Մելիք Ս. Դաւիթ-Բէկ
3 Մայիս 1899 Բարիկ

թիւնը կը փափաքի՝ կոր որ հայերը
դուրս ելլեն:

Թաղ. — Այո՛, թարգմաններուն
կ'սպասենք կոր:

Գ. Չ. — Բայց ես լսեցի թէ
կառավարութիւնը չուզեր կոր որ հա-
յերը դուրս ելլեն. մանաւանդ սա
դէպքը պատմեմ լսէ, ի՞նչ կարծիք
կունենաս: Երէկ գիշեր գաղտնի
գառնէն ներս մտեր էի, խեղճերուն
գաղտնաբար ուտելիք բաժնելու հա-
մար, տեսայ որ գիմացի Բաւա-
ժ էն թուղթի կը նետուին Եկեղե-
ցիին բակը, այդ թուղթերը ժողուե-
լով կարգացի, և ի՞նչ, ամենուն վը-
րայ ալ մի՛ ելլաք գրուած էր,
գարմացայ, հարցուփորձ ըրի, տեսայ
որ Բաւաժ ի վրայի այն սենեակը
որ եկեղեցիին բակը կը նայի, կառա-
վարութեան կողմէ վարձուեր է և
հոն լրտեսներ կան: և այդ թուղ-
թերը նետողները անկասկած՝ առնք
են, որովհետեւ գիշերը ուշադուռ-
ութեամբ տեսայ որ թուղթերը ճիշդ այդ
կողմէն կը նետուէին:

Թաղ. — Չարմանալի՛ բան...

Գ. Չ. — Այո՛, շատ զարմա-
նալի է, ես կը կարծեմ որ կառա-
վարութիւնը հայերուն չիլլալը կուզէ,
որպէս զի լսէ թէ անոնք յեղափոխա-
կաններ են, ոչ թէ սարսափէն եկե-
ղեցին ապաստանող խեղճ ժողովուրդ,
և ուզածը կատարէ:

Թաղ. — Շատ ճիշդ է, շուշները
դեռ խաղալիք խաղ ունին:

Գ. Չ. — Այո՛, սակայն պէտք
չէ խաղուինք, ժողովուրդին իմացը-
նելու է որ առանց այլապիլ դուրս
գան:

Թաղ. — Երթանք իմացենք:

(Կը մեկնին: Արփիար իր Տիգրան
կզբօրը հետ պահակ զինուորին կը
մօտենայ:)

Արփիար — Թող տուէք, ես Նա-
զըմ փաշային կողմէ կուգամ:

Ձինուոր — Առանց հրամանի
է՛րգիւնալ է ներս մտնել:

Արփիար — Փաշան հրաման
տուած է:

Ձինուոր — Ես ինչպէ՛ս գիտեմ
այդ:

Տիգրան Արփիար — (կզբօրը)
Շատ ճիշդ կ'սէ:

Արփիար — Ստեփան էֆէնտին
կը ճանչնաս:

Ձինուոր — Այստեղ այդ անու-
նով մարդ մը տեսայ:

Արփիար — Նե՛րսն է...

Ձինուոր — Այո՛:

Արփիար — Ուրեմն, ընկերդ
ղրկէ՛, թող կանչէ զայն:

Ձինուոր (ընկեր զինուորին) գը-
նա՛ այն մարդը կանչէ, և պին պա-
շին ալ իմաց տուր:

Արփիար — Օտար տէրութեանց
թարգմանները եկան:

Ձինուոր — Ո՛չ, հիմայ պիտի
գան:

(Այս միջոցին պին պաշին և Մե-
լիքեան էֆէնտի կուգան:)

Արփիար — Մելիքեան էֆէնտի
զիս ներս առ, փաշային կողմէ հրա-
մաններ ունիմ, պէտք է գործադրեմ:

Ս. Մելիքեան — (պին պաշին)
Ներս առէք ստոնք, մեզմէ են:

Պին պաշին — Հա՛, մեզմէ են:

Ս. Մելիքեան — Այո՛, և փաշա
էֆէնտին կողմէն կուգայ:

Պին պաշին — Հրամայէ՛ք, ներս
մտէք (կը հեռանայ):

Ս. Մելիքեան — Ըսէ՛ տեսեմ,
փաշան ի՞նչ հրաման ունի:

Արփիար — Աշխատէ և համագէ
ժողովուրդը որ դուրս չեկին ըսաւ:

Ս. Մելիքեան — Ի՞նչպէս պիտի
յաջողիս:

Արփիար — Է՛հ, դուն չես գի-
տէ՛ր որ զիս ամենքն ալ յեղափոխա-
կան կը կարծեն, խօսքերս պատգամի
տեղ կնդուռին, և արդէն իրենց աչ-
քերը չլացնող ծրագիր մը ունիմ որ
փաշան խորհուրդ տուաւ: Թարգմա-
ններուն պիտի ներկայացնեմ այս

պայմանները (գրպանէն թուղթ մը
հանելով կը ներկայացնէ, Մելիքեան
թուղթը կը կարդայ:)

Ս. Մելիքեան — Անշուշտ անոնց
կողմէ:

Արփիար — Հարկա՛ւ, ի դիմաց
այդ խեղճերուն այս պայմանները պի-
տի առաջարկեմ, որ անշուշտ թարգ-
մաններուն հաճելի չի պիտի երեայ
և խնդիր փաշային ուղածը պիտի
լինի, այսինքն թարգմանները այդ
պայմանները բնականաբար չի պիտի
ընդունին և առնեն քալին:

Ս. Մելիքեան — Շիտակը ըսելիք
չունիմ, փաշան խելք է կտրեր, ուր-
կէ՛ ալ կը գտնէ, ինչպէ՛ս միտքը կիյ-
նայ, հրէ՛ջ մէջ:

Արփիար — (եղբօրը ժամանակն
է, գուն գնա՛):

Ս. Մելիքեան — Ո՛ր պիտի եր-
թայ:

Արփիար — Պատրիարքարանի
Մայր եկեղեցին:

Ս. Մելիքեան — Ինչո՞ւ համար:

Արփիար — Միևնոյն դերը խա-
ղալու համար:

Ս. Մելիքեան — Այնտեղ ալ այս
պայմանները առաջարկելու:

Արփիար — Ո՛չ, միայն մի՛ ել-
լաք ըսելու: Եղբօրը դառնալով՝
եթէ՛ եկեղեցի մտնել չի յաջողիս,
Պատրիարքարանի պատուհանէն մեծ
գրեթով մի՛ ելլաք գրուած մը ցոյց
տուր:

Տիգրան Արփիարեան — Դուն
հոգ մի՛ ընիր, միջոց մը կը գտնեմ:

Արփիար — Հայտէ՛ նայիմ, քեզ
տեսնեմ:

(Տիգրան կը մեկնի):

(Եւրոպական երեք տէրութեանց
գեոպաններ ու թարգմանները գա-
ւազներով ներս կը մտնեն), Ռուսա-
կան զեապանատան առաջին թարգ-
ման Մաքսիմօֆ պին պաշին կը հը-
րամայէ:)

Մաքսիմօֆ — Մէկիկ մէկիկ թո՛ղ
դուրս գան:

Պին պաշին — Շատ լա՛ւ միւսիւ:

(Այս միջոցին Արփիար առաջ կը
նետուի ձեռքը թուղթ մը բռնած):

Արփիար — Պարո՛ն, ես պաշտօն
ունիմ ի դիմաց ապաստանեալներու
խօսելու Ձեզ հետ:

Մաքսիմօֆ — Շատ լա՛ւ խօսե-
ցէ՛ք:

Արփիար — Ապաստանեալները
ուրախութեամբ և շնորհակալութեամբ
կընդունին Ձեր միջնորդութիւնը, սա-
կայն թուրք կառավարութեան վրայ
բնաւ վստահ չի լինելուն, կը խնդ-
րեն որ կանխաւ այս պայմանները
յարգուին (թուղթը կը ներկայացնէ):

Մաքսիմօֆ — (Արփիարի ձեռքէն
թուղթը առնելով կը կարդայ) «մենք
ապաստանեալներս, տէրութեանց
ներկայացուցիչներուն կը ներկա-
յացնենք մեր հետեւեալ գրաւոր
առաջարկները և կը խնդրենք որ մեզ
խօստանան կէտ ալ գործադրել
տալ զանոնք, հակառակ պարագային
մենք դուրս չենք ելլեր:

1. Բոլոր ապաստանեալներս ա-
զատ լինիք, կարավարութիւնը բնաւ
իրաւունք չունենայ մեզ ձեռքաւա-
լելու:

2. Բոլոր հայ բանտարկեալնե-
րուն, արքայազներուն և փախստա-
կաններուն ընդհանուր ներում չը-
նորհուի:

3. Մայիս 11ի բարենորոգմանց
ծրագիրը անյապաղ գործադրուի:

Բարկութեամբ ոտքը դնելով կը
զարնէ, թուղթը ձեռքին մէջ ճկելով
Արփիարի երեսին կը նետէ: Անպի-
տաններ... (ներկայ եղողներուն
դառնալով՝ Ո՛վ է այս մարդը (Արփի-
արը ակնարկելով):

Ս. Մելիքեան — Հայ խմբագիր
մըն է:

(Շարունակելի)

ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅԵՐԸ ԵՒ ԼԱ ՀԱՅԻ
ԴԵՍՊԱՆԱԺՈՂՈՎԸ

Վառնայի հայ գաղթականու-
թիւնը՝ տեղւոյն Եկեղեցւոյն մէջ Ապ-
րիլ 23ին միթիւնի մը կազմելով՝ Հայ-
կական ինքիբը միջազգային խաղա-
ղութեան Դեսպանաժողովին ներկա-
յացնելու համար հետեւեալ հեռագիրը
գրկած են ի Լա Հայ, որուն պատ-
ճէնը գաղղիներէն լեզուաւ տպա-
գրուած ըլլալով մի օրինակ ալ խմ-
բագրութեանս ղրկուած է, որուն
թարգմանութիւնը կը գետնդնէ հոս:

Առ Պ. Նախագահ Զէնքեկէցու-
թեան միջազգային ժողովոյ:

Վառնայի հայ գաղթականութիւնը
ներկայացնող անդամները՝ 1899 Ապ-
րիլ 23/5 Մայիսին Եկեղեցւոյ բակին
մէջ 3000 հայերու ներկայաւորութեամբ
միթիւնի մը կազմելով խնարհաբար
կը համարձակին ներկայացնել հետեւ-
եալ խնդրանքը բարձրագոյն ժողովիդ,
որուն կը նախագահէ:

Նկատելով որ վերջին քսան տա-
րիներու շրջանին մէջ, հակառակ
Պերլինի դաշնադրութեան 61րդ յօդ-
ուածին՝ որ մեծեալ տառ մնացած է,
Թուրքիոյ հայերու վիճակը փոխանակ
բարեփոխուելու, ընդհակառակը ան-
վերջանալի կոտորածներու ու խեղ-
ճութեանց չըջան մը եղած է:

Նկատելով որ սովոր — ընդհա-
նուր թշուառութեան բնական հետե-
ւանքը — կը շարունակէ շարժաբեւ
արդէն վերջին աստիճանի թշուառա-
ցած Հայաստանը, որ արդէն վայր է
դարձած չառ մը դժբաղդութեանց:

Նկատելով վերջապէս որ Հայաս-
տանի արդի կացութիւնը ընդհ. ջնջ-
ման կատարեալ ասպարէզ դարձած՝
վտանգ կ'սպառնայ միջազգային խա-
ղաղութեան, որը Հայկական ինքիբը
լուծումն ուշացնելու կը ծառայէ,
տրամադորէն հակառակ է մարդա-
սիրական այն՝ նպատակին, որուն
անհաւաք դատաւորն եղած է Զէնքե-
կէցութեան միջազգային Դեսպանա-
ժողովիդ:

Արդ բոլոր այս արդարացի փաս-
տերէն թելադրուած Վառնայի հայ
գաղթականութիւնը՝ որ կը բաղկա-
նայ կոտորածի սարսափէն խոյս
տուող փախստականներէ, ընդհ. ժո-
ղով գումարելով՝ համաձայն ամբողջ
Հայութեան բաղձանաց՝ կը հրաւիրէ
բարձրագոյն ժողովիդ մարդասէր ու-
շադրութիւնն Թուրքիոյ հայերու դա-
ռն կայութեան վրայ, և թախան-
ձանք կը խնդրէ մտցնել մեր երկրին
մէջ բարենորոգիչ միջոցներ, միջազ-
գային համաձայնութեամբ ու երաշ-
խաւորութեամբ անյապաղ գործադրել
ապահովելու գամար խաղաղ և աշ-
խատասէր ժողովրդի մը՝ կեանքը
ստացուածքն ու պատիւը:

Ի Դիմաց Վառնայի ընդհ. ժո-
ղովին:

Նիպհ. — Աբր. Ամիրխանեանց
(Առաջնորդ)

Անդամ — Գովսէփ Բարսամեան

— Կ. Սանտալեան

— Ս. Մարիւեան

Բրտղ. — Տ. Ա. Աճէմեան

Թ. Գ. — Վերի որուշումներն
հեռագրուած է Լա Հայի Դեսպանա-
ժողովին, և զայն կազմող Տէրու-
թեանց արտաքին գործոց նախարա-
րութեանց:

ՂԱՆԻ ԲԵԿԻՆ
ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Համարի սիրելի և հաւատարմ
թիկնապահներէն՝ Արպանացի Ղանի
բէկին սպանման առթիւ ժընէվ հը-
րատարակուող Երիտասարդ Թուրքե-
րու «Օսմանլը» լրագիրը հետեւեալ
յայտնութիւնները կընէ:

«Ապտիւլ-Համիտը իւր արիւնա-
թաթախ սուրը անխղճօրէն կը միտ
ն'չ միայն թրքահպատակ խեղճերու
սիրտը, այլ նոյն իսկ օտարահպա-
տակներու ալ երբեմն»:

«Ղանի բէկի շարք մը ոճրագոր-
ծութեանց մէկ երկուսը միայն պի-
տի յիշենք հոս: — Իտալացի մանկա-
մարդ գեղեցկուհի մը՝ Համիտի քեռ-
որդույն հետ սիրահարական յարա-
բերութեանց մէջ կը գտնուի. խնդի-
րը գաղտնի չ'մնար, Համիտի աղջիկը
նշմարելով տարօրինակ նախանձ
թելադրեալ գործը կ'մտնէ իւր հօր
համարին, որ կը խոստանայ օրինա-
կելի մի դաս տալ խեղճ կնոջ: Արպա-
նացի հերոսը!! հետեւեալ օրն հրա-
մաններ կը ստանայ իր տիրոջմէն ի-
տալացի կնոջ կեանքին վերջ տալ
ճարպիկ գաղտնապահութեամբ: Մի
քանի օր յետոյ թշուառ արարածն
իր սենեկին մէջ կ'սիրուած կը տես-
նուի, առանց յանդուգն ոճիւրի հե-
ղիմկը գտնուելու»:

«Մի ուրիշ անգամ այս ձեռն
տակ անհետացաւ նաեւ հելլենուհի մը՝
իւր գեղեցկութեան զոհ երթալով:
Այս խեղճին ալ դժբաղդութիւնը
պատճառ եղած է, պաշտական
բարձր աստիճանաւորի մը հետ
գաղտնի յարաբերութիւն ունենալը:
Պաշտական կինը՝ իւր ամուսինէն
վրէժ լուծելու տենչանք կը հրաւիրէ
Ղանի բէկը, յանձնարարելով որ այդ
կինը իր ծուղակը ձգէ և սպաննէ.
յայտնի ոճրագործը կը խոստանայ
անյապաղ անոր հրամանը գործադրել.
Հագիւ 3-4 օրեր կանցնին խեղճ կը-
նոջ դիակը կը գտնուի մի ժայռի ըս-
տորումը, առանց իմացուելու սուլ-
թանական մեքենայութեանց օժան-
դակող մարդասպան ոճրագործներու
հետքը»:

«Հաջորդ Փաշա՝ Պօստոյ բնակիչ-
ներուն մեծ ծառայութիւն մը մա-
տուցած եղաւ, սպաննելով Ապտիւլ
Համիտի մեծ արժէքաւոր ծառայու-
թիւններն մատուցանել յանձն առ-
նող և անոր ամենասիրելի ու հաւա-
տարիմ դարձող արիւնաբերու ոճրա-
գործ Ղանի բէկը»:

ՆՈՒՐԱՏՈՒՄԻՒԹԻՒՆ

Եգիպտական ազգայիններէն Տիար
Կարապետ Մ'լըշեան՝ մի օրինակ «Մի-
ութիւն» նուիրեց Աղբքսանգրիոյ
Ժողովրդային ընթերցարանի:

Ֆիլիպէէն Տիար Ա. Տէմիրճի-
պաշեանէ շնորհակալութեամբ ստա-
ցանք 10 ֆրանք:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

— Աղբքսանգրիա. պ. Մարկոպան-
եան. Ձեզ փնտռողի հասցէն է՝
Bedros Tertzagian. Grant yarn Co.
Fitchburg U. S A

— Ֆրէզնօ. պ. Թ. Ամիրեան. «Մի-
ութիւն»ը առժամանակեայ կերպով
դադրած էր մինչև Փետրուարի սկիզ-
բը, հետեւապէս Յունուարինը հրա-
տարակուած չէ որ ղրկենք:

— Լօվրէնս. պ. Թ. Նազարէթեան.

Ձեր խոստացած նամակը ստանալու
կ'սպասենք դուս:

— Աղբքսանգրիա. պ. Արամ Բագ-
րատունի. հիթէ տիղէդ մեկնած չէք
Ձեր նամակին կ'պատենք:

— ... (Թուրքիա) Գրութիւննիդ
ստացուած և պէտք եղածը կարգա-
դրուած է: Ձեր խնդրած հասցէն՝
Mr. H. G. Djangulian Rue Evripidou
No. 35 Athènes (Greece)

— Պէտֆօրտ. պ. Ս. Պ. (Անգղ.)
մեր ունեցածը միայն նշանակը Հա-
յաստանեայցի գունաւոր և մեծա-
դիրն է. ուրիշ պատկերներ չունինք.
Իսկ թերթին մէջ ծանուցուածներուն
համար ինչ տեղեկութիւն տանք Ձեզ,
կրնաք ծանուցմանց ներքեւ նշանա-
կուած հասցէներուն դիմել ուղղակի:
— Լէմպէրի Բոլոնիա) պ. Օ. Թ.
Ձեր պատ. գրութիւնը ստացանք, ի
մօտոյ կը պատասխանենք:

Ժընէվ — պ. Ս. Վ. Ողբացեալ
Հայրենասիրի լուսանկարը ստացած
ենք, սիրով կ'նդուինք Ձեր առա-
ջարկը, կ'սպասենք կենսագրութեանը:

ՆՈՐ ԹԵՐԹ ՄԸ
ՀԱՅՐԵՆԻՔ

Շարաթաթերթ Ազգային

Նիւ-Եօրքի մէջ խումբ մը երի-
տասարդներ՝ սկսած են հրատարակել
սոյն համակրելի թերթը. որուն գո-
յութիւնը պահպանելու համար կազ-
մած են ընկերութիւն մը և խմբա-
գրական մարմինը, «Հայ Ե ն ի ք»ը
պիտի պարունակէ ազգային, քաղա-
քական, գրական և փոստական կրթիչ
յօդուածներ, ինչպէս կը յայտարարէ
Պատ. Խմբագրութիւնը, «Հայրենիք»ը
որ և է կուսակցութեան օրկանը չի
պիտի ըլլայ, և ո'չ ալ հակայեղափո-
խական կամ հակակուսակցական
թերթ մը պիտի ըլլայ, այլ ընդհակա-
ռակը երբեք առիթը չպիտի կորսնցնէ
արայայտելու իր համակրութիւնն
և հիացումը, քննադատումն ու յար-
ձակումը որ և է կուսակցութեան
նկատմամբ, երբ անոնք ազգային Ս.
Գործին կ'օգնեն և կամ կը վնասեն:
Կը սիրենք յուսալ որ մեր յարգելի
նոր պաշտօնակիցները ըստ իրենց
խոստման մշտնջենապէս պահեն իրենց
գովելի ուղղութիւնը, որուն համար ի
սրտէ յաջողութիւն ու յարատեւութիւն
կը մաղթենք:

«Հայրենիք»ի տարեկան բաժնե-
գիրն է Ամերիկայի համար մէկուկէս
տօլար, Արտասահմանի համար 10 ֆր.
Հասցէն՝ The HAYRENİK Pub Co,
628 Third ave. New-York city

ԲԱԶՄԱՎԷՊ

ԲԱԶՄԱՎԷՊԻ՞ կը հրատարակուի
ամեն ամսոյ սկիզբը: Կը պարունակէ
ուսումնական հին նորակազմ բառե-
րու ստուգարանութիւն, հետաքրքը-
րական ազգային տեղեկութիւնք. նը-
մանապէս պատմական, ուսումնական,
կենսագրական, բարոյական և իմաս-
տասիրական եւ այլն յօդուածներ:

Հասցէն՝ Rédaction de la «BAZ
MAVEP», S.t Lazar VENISE (Italie)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն ամսոյ
սկիզբը:

Հայ — Գրական յօդուածներէն
զատ՝ ճշգիւ տեղեկութիւն կը տրուի

Հայ- գրականութեան, պատմութեան
եւ այլն նկատմամբ ամեն ամիս ելած
հրատարակութեանց վրայ: Նոյնպէս
քննադատական տեղեկութիւն կը
տրուի ազգային լրագրաց մէջ տրպ-
ուած կարեւոր լրերու մէջ, Հասցէն՝

A la Rédaction de la Revue „Han-
tesse“, Vienne (Autriche) VII? Me-
chitharistengasse 4.

ՀԱՅԵԼԻ

Ազգային և Զաւեշտական

Շարաթահանգէս

Տարեկան բաժնեգիրն է 12 ֆր.

վեցամսեայ 6 ֆր. Կանխիկ: Հասցէն՝

Diran Papazian Rue Dragoman,
K. Stepan Varna (Bulgarie)

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Ազգային, Գրական և Գիտարուես-
տական: Հասցէն՝

Mr. A. Tchobanian 6 place de
l'Odéon. PARIS

ԲԱՆԱՍԵՐ

Հանդէս Հնախօսական, Պատմական,
Լեզուաբանական և Բնական,
կը հրատարակուի ի Պարիս երեք
ամիսը մի անգամ:

Տնօրինութիւն Տ. Կ. Թ. ԲԱՍՄԱԶԵՆԻՒ
Եւ աշխատակցութեամբ ազգային և
օտար արեւելագիտաց:

տարեկան 4 գրքի բաժնեգիրն
է 20 ֆր: Մէկ գիրքը կարժէ 6
ֆր: Հասցէ՝

Mr. K. Basmadjian 112, Bd Roche-
choart. PARIS

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇՈՒՆ

Գունաւոր և մեծադիր. գիրն է
2 ֆր. փոստի ծախքով: Դիմել խմ-
բագրութեանս հասցէին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Պ. Ա. ԶԱՐԳԱՆԷԼԵԱՆԻ

(Հաստատուել ի Վառնա Պուլկարիա)

Կը գտնուին ամէն տեսակ գրո-
ցական և վիպական գիրքեր, «Միութի-
ւն»ի խմբագրութեան հրատարա-
կած Հայկական Զինանշան որուն
գիրն է 2 ֆր. փոստի ծախքով:
Նմանապէս Հայկական ընդարձակ եր-
գարան գիրն է 2 ֆր. փոստի ծախքով:
Իրամի փոխարէն կընդունուին չի գը-
ծածուած նամակադրօշմներ (փուլ)
Պուլկարական, Գաղղիական, Անգ-
ղիական և Թրքական: Մտիւն կառ-
նուին և թէ կը վաճառուին ամէն
տեսակ նամակադրօշմներ: Դիմել առ

Mr. A. Zarbhanélian, Librairie
Varna (Bulgarie)

Խմբագրութեանս նիւթականը
տազնապալից գրութեան մէջ ըլլալով՝
թախանձանք կը խնդրենք մեր յար-
գելի բաժանորդներէն և մանաւանդ
Զինանշանի հայիւ ունեցողներէն որ
փութան իրենց բաժնեկիւններն ու
Զինանշանի հայիւները շուտով մեզ
հասցնել:

ԽՄԲԱԳ. «ՄԻՈՒԹԻՒՆ»Ի

ԱԹԷՆՔ ՀԱՅԿ. ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ